

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Պետական բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Կառավարության պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունվար-հունիս ամիսներին տնտեսական ակտիվության աճը պահպանվել է բարձր մակարդակում, թեև հունիսին նկատվել է որոշակի դանդաղում: 2026թ. հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) 12-ամսյա աճը կազմել է 7.7%՝ մայիսի 11.7%-ի դիմաց: Արդյունքում՝ հունվար-հունիս ամիսների կուտակային աճը կազմել է 7.9%՝ հունվար-մայիսի 8.0%-ի համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով: Կիսամյակի աճը հիմնականում ապահովվել է ծառայությունների, արդյունաբերության և շինարարության ոլորտների հաշվին, մինչդեռ գյուղատնտեսության անկումը զսպել է ընդհանուր աճը:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային¹, %




2026թ. հունվար-հունիս ամիսներին տնտեսական ակտիվության 7.9% աճին հիմնական նպաստում ունեցող ճյուղերն են եղել ծառայությունների ոլորտը և արդյունաբերությունը՝ համապատասխանաբար 3.8 և 3.0 տոկոսային կետ նպաստումներով: Շինարարությունը ևս էական դրական ազդեցություն է ունեցել՝ ապահովելով 1.7 տոկոսային կետ նպաստում, իսկ առևտրի նպաստումը կազմել է 0.5 տոկոսային կետ:

Միաժամանակ, գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է 11.9% անկում, ինչը շուրջ 1.1 տոկոսային կետով հակազդել է տնտեսական ակտիվության աճին:


¹ Նախորդ ամիսների ՏԱՑ-ի ամսական ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-հունիս ամիսներին, տոկոսային կետ²



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճի տեմպը հունիսին զգալիորեն դանդաղել է: 2026թ. հունիսին արդյունաբերական արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 4.0%-ով՝ մայիսի 9.5% աճի դիմաց: Արդյունքում՝ 2026թ. հունվար-հունիս ամիսների կուտակային աճը կազմել է 10.8%՝ հունվար-մայիսի ցուցանիշի համեմատ նվազելով 1.4 տոկոսային կետով:

² Նպաստումների հաշվարկն իրականացվել է SUՑ-ի 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:

2026թ. հունվար-մայիս³ ամիսներին արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 12.2%-ով: Աճի հիմնական աղբյուրները եղել են մշակող և հանքագործական արդյունաբերության ճյուղերը, որոնց նպաստումներն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար շուրջ 5.7 և 5.5 տոկոսային կետ: Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման թողարկումն աճել է 32.1%-ով, իսկ մշակող արդյունաբերության թողարկումը՝ 8.6%-ով: Դրական նպաստում է ունեցել նաև «էլեկտրականության, գազի, գոլրշու և լավորակ օդի մատակարարում» ենթադրտը, որի 6.5% աճն ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է շուրջ 1.0 տոկոսային կետով: «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթադրտի աճը կազմել է 4.4%, իսկ նպաստումը եղել է փոքր՝ շուրջ 0.1 տոկոսային կետ:

Հանքարդյունաբերության աճը մեծամասամբ պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման 36.2% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է շուրջ 5.8 տոկոսային կետ:


Մշակող արդյունաբերության աճին ամենամեծ դրական նպաստումն ունեցել է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղը՝ շուրջ 3.9 տոկոսային կետ, որի թողարկումն աճել է 34.7%-ով: Նշանակալի նպաստումներ են ապահովել նաև սննդամթերքի արտադրությունը՝ շուրջ 2.0 տոկոսային կետ, խմիչքների արտադրությունը՝ 1.5 տոկոսային կետ, և քիմիական նյութերի ու քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 1.3 տոկոսային կետ: Դրական ազդեցություն են ունեցել նաև կահույքի արտադրությունը և այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրությունը՝ յուրաքանչյուրը շուրջ 0.5 տոկոսային կետ նպաստմամբ: Վերջինիս աճը հիմնականում պայմանավորված է եղել ոսկերչական արտադրատեսակների արտադրության 30.4% աճով:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթադրտներ զսպել են ընդհանուր աճը: Առավել նշանակալի բացասական նպաստումներ են արձանագրվել այլ խմբավորումներում չներառված մեքենաների և սարքավորանքի արտադրության ու ծխախոտային արտադրատեսակների արտադրության ոլորտներում: Դրանց թողարկումները նվազել են համապատասխանաբար 73.4% և 5.3%-ով՝ մշակող արդյունաբերության աճին հակազդելով շուրջ 1.0 և 0.9 տոկոսային կետով: Բացասական ազդեցություն են ունեցել նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և էլեկտրական սարքավորանքի արտադրությունները՝ համապատասխանաբար շուրջ 0.3 և 0.2 տոկոսային կետով:

³ Արդյունաբերության հունիս ամսվա տվյալները՝ ըստ ենթադրտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում բարձր աճը պահպանվել է նաև հունիսին, թեև ամսական ցուցանիշը որոշակիորեն դանդաղել է: 2026թ. հունիսին շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 25.4%-ով՝ մայիսին արձանագրված 27.1% աճի դիմաց: Միաժամանակ, հունվար-հունիս ամիսների կուտակային աճը հասել է 24.5%-ի՝ հունվար-մայիսի 24.1%-ի համեմատ արագանալով 0.4 տոկոսային կետով: Այսպիսով, շինարարության ոլորտում պահպանվում են բարձր աճի տեմպերը՝ չնայած նախորդ տարվա բարձր համեմատական բազային և Երևանի մասով հիպոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի ավարտից հետո աճի աստիճանական թուլացման սպասումներին:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում աճը հունիսին շարունակել է արագանալ: 2026թ. հունիսին ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 19.7%-ով՝ մայիսի 14.7% աճի դիմաց: Բարձր ամսական աճի ազդեցությամբ հունվար-հունիս ամիսների կուտակային աճը հասել է 11.0%-ի՝ հունվար-մայիսի ցուցանիշը գերազանցելով 1.9 տոկոսային կետով:

Հունվար-մայիս ամիսների տվյալներով⁴ ծառայությունների ոլորտի աճը պայմանավորված է եղել գրեթե բոլոր ենթաոլորտների դրական դինամիկայով: Ընդհանուր աճին առավել մեծ նպաստում են ունեցել «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաոլորտները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 2.8 և 1.6 տոկոսային կետ: Նշանակալի են եղել նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «կազմակերպության և հանրային սննդի կազմակերպում» և «վարչարարական և օժանդակ գործունեություն» ենթաոլորտների նպաստումները: Միևնույն ժամանակ, կրթության ծառայությունների գծով արձանագրվել է 1.7% նվազում, որի նպաստումը ընդհանուր աճին եղել է գրեթե զրոյական:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի ոլորտում թույլ դինամիկան պահպանվել է նաև հունիսին: 2026թ. հունիսին առևտրի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 0.1%-ով՝ մայիսին արձանագրված զրոյական աճից հետո: Արդյունքում՝ հունվար-հունիս ամիսների կուտակային աճը կազմել է 0.9%՝ հունվար-մայիսի ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

⁴ Ծառայությունների ոլորտի հունիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման բացասական դինամիկան հունիսին ավելի է խորացել: 2026թ. հունիսին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 20.5%-ով՝ մայիսին արձանագրված 10.3% անկման դիմաց: Արդյունքում՝ հունվար-հունիս ամիսների կուտակային անկումը հասել է 6.7%-ի՝ հունվար-մայիսի 3.4%-ի համեմատ խորանալով 3.3 տոկոսային կետով: Հունիսյան անկմանը, ամենայն հավանականությամբ, նպաստել են նաև ՌԴ-ի կողմից հայկական մի շարք ապրանքների նկատմամբ կիրառված սահմանափակումները, այդ թվում՝ հունիսի 12-ից Հայաստանից ծագող և առաքվող ամբողջ ենթակարանտինային արտադրանքի ներմուծման և տարանցման ժամանակավոր սահմանափակումը: Այնուամենայնիվ, այդ սահմանափակումների ազդեցության չափը հնարավոր կլինի ավելի հստակ գնահատել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից արտահանման՝ ըստ ապրանքախմբերի և երկրների մանրամասն տվյալների հրապարակումից հետո:


Հունվար-մայիս⁶ ամիսների տվյալներով՝ արտահանման նվազումը շարունակել է մեծամասամբ պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 47.5% անկմամբ, որի բացասական նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 15.8 տոկոսային կետ: Արտահանման վրա բացասական ազդեցություն է ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբը, որի արտահանումը նվազել է 7.6%-ով՝ ընդհանուր ցուցանիշին բացասաբար նպաստելով շուրջ 1.2 տոկոսային

⁵ Արտահանման և ներմուծման 2026թ. նախորդ ամսվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁶ Արտահանման հունիս ամսվա տվյալները՝ ըստ ապրանքատեսակների, դեռևս չեն հրապարակվել:

կետով: Միևնույն ժամանակ, արտահանման նվազումը զգալիորեն մեղմվել է «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 90.1% աճի հաշվին, որի դրական նպաստումը կազմել է շուրջ 12.1 տոկոսային կետ: Դրական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերը՝ համապատասխանաբար շուրջ 1.1 և 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման դինամիկան հունիսին նկատելիորեն բարելավվել է: 2026թ. հունիսին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 8.6%-ով՝ մայիսի 1.5% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-հունիս ամիսների կուտակային աճը հասել է 4.0%-ի՝ հունվար-մայիսի ցուցանիշի համեմատ արագանալով 0.9 տոկոսային կետով: Միաժամանակ, տարեսկզբից ներմուծման ամսական ցուցանիշների զգալի տատանումները վկայում են, որ դրական դինամիկան դեռևս միատարր և կայուն բնույթ չի ստացել:

Հունվար-մայիս ամիսների⁷ տվյալներով՝ ներմուծման աճը հիմնականում ձևավորվել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի հաշվին: Նշված հինգ ապրանքախմբերի ընդհանուր նպաստումը ներմուծման աճին կազմել է շուրջ 12.6 տոկոսային կետ: Առավել մեծ նպաստումն ունեցել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբը՝ շուրջ 3.5 տոկոսային կետ, որին հաջորդել են տրանսպորտային միջոցները՝ 2.6, պատրաստի սննդի

⁷ Ներմուծման հունիս ամսվա տվյալները՝ ըստ ապրանքատեսակների դեռևս չեն հրապարակվել:


արտադրանքը՝ 2.5, հանքահումքային արտադրանքը և քիմիական արտադրանքը՝ շուրջ 2.0-ական տոկոսային կետ նպաստումներով:

Միաժամանակ, ներմուծման աճը զգալիորեն զսպվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ծավալների 62.2% անկմամբ, որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 11.8 տոկոսային կետ: Բացասական ազդեցություն են ունեցել նաև մանածագործական իրերի, կոշկեղենի և թղթից պատրաստված իրերի ներմուծման կրճատումները, սակայն դրանց նպաստումները համեմատաբար փոքր են եղել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ⁸

2026 թվականի հունվար-մայիսին անվանական աշխատավարձերի աճի տեմպն արագացել է հիմնականում պետական հատվածում գրանցված բարձր աճի հաշվին: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5.9%-ով՝ 2025 թվականի համապատասխան ժամանակահատվածի 5.1% աճի դիմաց: Պետական հատվածում աշխատավարձերի աճի տեմպը կազմել է 8.8%՝ նախորդ տարվա 4.7%-ի համեմատ՝ արագանալով 4.1 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ոչ պետական հատվածում անվանական աշխատավարձի աճը կազմել է 4.9% և նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել: Այսպիսով, ընդհանուր տնտեսությունում աշխատավարձերի աճի արագացումը պայմանավորված է եղել պետական հատվածում աշխատավարձերի առավել բարձր աճով:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-մայիսին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար 2026թ. հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, 12-ամսյա աճը (% աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (ՀՀ դրամ)



2026 թվականի հունիսին ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ արժևորվել է ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժեզրկվել: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 368.3 դրամ՝ նախորդ տարվա հունիսի համեմատ նվազելով 15.9 դրամով: Եվրոյի նկատմամբ միջին փոխարժեքը կազմել է 424.2 դրամ՝ տարեկան կտրվածքով նվազելով 18.4 դրամով: Մինչև նույն ժամանակ, ՌԴ ռուբլու նկատմամբ միջին փոխարժեքը կազմել է 5.0 դրամ՝ նախորդ տարվա հունիսի համեմատ աճելով 0.1 դրամով: Ընդհանուր առմամբ, 2026 թվականի հունվար-հունիսին ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 4.5%-ով, իսկ Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել՝ համապատասխանաբար 2.1%-ով և 7.5%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը դանդաղել է հունիսին, սակայն կուտակային աճի տեմպը մնացել է նույն մակարդակում: 2026թ. հունիսին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 14.6%՝ մայիսի համեմատ դանդաղելով 5.4 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 14.7%՝ հունվար-մայիսի համեմատ մնալով նույն մակարդակում:

Եկամուտների աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ոչ հարկային եկամուտների բացասական դինամիկայով: Մասնավորապես, ոչ հարկային եկամուտները հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազել են 9.3%-ով՝ ընդհանուր եկամուտների կուտակային աճին հակազդելով 0.5 տոկոսային կետով:

Հարկային եկամուտների մասով արձանագրվել է աճի տեմպի որոշակի արագացում՝ հունվար-մայիսի 14.6%-ից հունվար-հունիսին դառնալով 14.7%: Պաշտոնական դրամաշնորհների աճի տեմպը նույնպես արագացել է՝ հունվար-հունիսին կազմելով 20.6%՝ հունվար-մայիսի 6.0%-ի համեմատ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների և պետական տուրքի աճին առավել մեծ նպաստում են ունեցել ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը, որոնց մուտքերն աճել են համապատասխանաբար 11.1%-ով և 12.7%-ով՝ ընդհանուր ցուցանիշին նպաստելով 3.4 և 3.3 տոկոսային կետով: Նշանակալի դրական նպաստում է ունեցել նաև շահութահարկը, որի մուտքերն աճել են 11.5%-ով՝ ապահովելով 2.5 տոկոսային կետ նպաստում: Բնապահպանական և բնօգտագործման վճարներն աճել են 83.7%-ով՝ ընդհանուր աճին նպաստելով 1.8 տոկոսային կետով, իսկ

պետական տուրքերի 42.9% աճի նպաստումը կազմել է 1.3 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են 2.6%-ով՝ հարկային եկամուտների ընդհանուր աճին բացասաբար նպաստելով 0.1 տոկոսային կետով:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. Հունվար-հունիս		2026թ. Հունվար-հունիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	14.2	14.2	14.7	14.7
Ավելացված արժեքի հարկ	25.1	7.0	11.1	3.4
Ակցիզային հարկ	20.6	1.0	13.1	0.6
Շահութահարկ	18.0	3.7	11.5	2.5
Պետական տուրք	22.3	0.6	42.9	1.3
Մաքսատուրք	0.9	0.0	-2.6	-0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-40.1	-1.7	83.7	1.8
Այլ հարկեր	-3.9	-0.1	30.7	0.8
Շրջանառության հարկ	25.0	0.6	17.9	0.5
Եկամտային հարկ	9.3	2.5	12.7	3.3
Սոցիալական վճարումներ	13.5	0.6	14.7	0.6

2026թ. առաջին կիսամյակում բյուջեի եկամուտներն էականորեն գերակատարվել են: Մասնավորապես, ընդհանուր եկամուտների առաջին կիսամյակի պլանը կազմում էր 1,513.4 մլրդ դրամ, իսկ փաստացի ցուցանիշը կազմել է դրանից շուրջ 8.6%-ով կամ 129.8 մլրդ դրամով ավելի: Հարկային եկամուտների մասով արձանագրվել է շուրջ 94.2 մլրդ դրամի կամ 6.4% գերակատարում: Պլանավորվածի համեմատ ավելի են եղել նաև այլ եկամուտները և պաշտոնական դրամաշնորհները՝ համապատասխանաբար 21.5 և 14.1 մլրդ դրամով:

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպն արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2026թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 18.3%-ով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով: Արդյունքում հունվար-հունիս ամիսներին բյուջեի ծախսերի աճն արագացել է՝ կազմելով 7.0%՝ հունվար-մայիսի 4.5%-ի դիմաց:

Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն աճել են 16.1%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին ունենալով 12.8 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) կրճատվել են 28.3%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին հակազդելով 5.7 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը/պակասուրդը (-), մլրդ դրամ



Բյուջեի ծախսերի մասով արձանագրվել են էական թերակատարումներ:

Ընդհանուր բյուջեի ծախսերը 2026թ. առաջին կիսամյակի համար պլանավորված 1,829.7 մլրդ դրամի համեմատ թերակատարվել են 253.8 մլրդ դրամով, որից 110.1 մլրդ դրամն ընթացիկ ծախսերի մասով և 146.4 մլրդ դրամը կապիտալ ծախսերի մասով (2.7 մլրդ դրամի չափով պլանավորվածից շեղվել են նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը): Ընդ որում՝ կապիտալ ծախսերի թերակատարումը պլանի նկատմամբ կազմել է 40.8%:

Պետական բյուջեն հունվար-հունիս ամիսներին պահպանել է հավելուրդային դիրքը, թեև հավելուրդի չափը նախորդ ամսվա համեմատ նվազել է: 2026թ. հունվար-հունիս ամիսներին եկամուտների և ծախսերի վերոնշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 67.3 մլրդ դրամ հավելուրդ՝ հունվար-մայիսի 95.8 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետական բյուջեն եղել է պակասուրդային՝ շուրջ 39.2 մլրդ դրամի չափով:


Եկամուտների գերակատարման և ծախսերի թերակատարման արդյունքում բյուջեի պակասուրդն էականորեն շեղվել է պլանավորվածից: Մասնավորապես, 2026թ. առաջին կիսամյակի համար պլանավորվել էր 316.4 մլրդ դրամ պակասուրդ, մինչդեռ փաստացի եղել է 67.3 մլրդ դրամի չափով հավելուրդ, այսինքն՝ ընդհանուր շեղումը կազմել է շուրջ 383.7 մլրդ դրամ:

5.4. Կառավարության պարտք

ՀՀ կառավարության պարտքի աճի տեմպն աստիճանաբար դանդաղում է:

2026թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի ծավալը կազմել է 13,892.6 մլն ԱՄՆ դոլար՝ մայիսի համեմատ աճելով ընդամենը 8.4 մլն ԱՄՆ դոլարով: Նախորդ տարվա հունիսի համեմատ կառավարության պարտքն աճել է 4.7%-ով, ընդ որում՝ աճի տեմպը մայիսի ցուցանիշի համեմատ դանդաղել է 0.5 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով) աճը կազմել է 0.5%, իսկ արտաքին պարտքինը (արտահայտված ԱՄՆ դոլարով)՝ 4.4%:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է նաև հունիսին: 2026թ. հունիսին պետական կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6.8% և 7.39%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով համապատասխանաբար 1.2 և 2.0 տոկոսային կետով: Մայիսի համեմատ կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները գրեթե չեն փոխվել, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 0.6 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը կրկին արագացել է: 2026թ. հունիսին 12-ամսյա գնաճը կազմել է 5.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.9 տոկոսային կետով: Վերջինս բավական բարձր է Կենտրոնական բանկի կողմից թիրախավորված $3\pm 1\%$ -ից, սակայն ԿԲ-ն դեռևս չի բարձրացրել քաղաքականության տոկոսադրույքը՝ պահպանելով այն 6.5% մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը հունիսին էապես արագացել է: 2026 թվականի հունիսին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 20.6%-ով՝ մայիսի 17.5%-ի դիմաց: Աճը հիմնականում պայմանավորվել է ռեզիդենտներից ներգրավված ավանդների 24.3% ավելացմամբ: Միաժամանակ, ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը ևս աճել է 8.1%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2026թ. հունիսին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ավելացմամբ, որի նպաստումը կազմել է շուրջ 10.4 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստում են ունեցել նաև ձեռնարկություններից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդները՝ համապատասխանաբար 3.9 և 3.6 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները ևս նպաստել են ընդհանուր աճին շուրջ 1.8 տոկոսային կետով, իսկ շահույթ չհետապնդող կազմակերպություններից ներգրավված ավանդների նպաստումը կազմել է շուրջ 0.9 տոկոսային կետ:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը հունիսին որոշակիորեն դանդաղել է՝ մնալով բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 24.4%-ով՝ մայիսի 25.2%-ի դիմաց: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ավելացմամբ, որոնք տարեկան կտրվածքով աճել են համապատասխանաբար 22.6%-ով և 75.4%-ով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի բարձր աճին նպաստել է նաև նախորդ տարվա հունիսի՝ համեմատաբար ցածր բազան, երբ դրանց աճը կազմել էր 7.6%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճի տեմպերը պահպանվել են բարձր մակարդակներում՝ 2026թ. հունիսին կազմելով համապատասխանաբար 23.8% և 21.4%: Ընդհանուր ռեզիդենտների վարկերի աճին դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 11.9 և 10.6 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




2026թ. հունիսին տնտեսության հիմնական ուղղություններին տրամադրված վարկերի աճերը պահպանվել են բարձր մակարդակում: Աճին առավել մեծ նպաստում է ունեցել ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերի ավելացումը՝ շուրջ 8.7 տոկոսային կետ: Բարձր է եղել նաև սպառողական վարկերի նպաստումը՝ կազմելով 6.3 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստում են ունեցել հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 3.6 և 2.9 տոկոսային կետով: Արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրված վարկերի նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.7, 1.5 և 1.2 տոկոսային կետ:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է աճել, սակայն աճի տեմպը դանդաղում է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2026թ. մայիսին կազմել է 356.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մայիսի 238.3 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: Կուտակային՝ հունվար-մայիս ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է շուրջ 2.1 անգամ (նախորդ ամիս՝ 2.6 անգամ), ինչը պայմանավորված է ինչպես արտահոսքի կրճատմամբ (շուրջ 3.7%), այնպես էլ ներհոսքի աճով (շուրջ 22.0%):

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. հունիսին նկատվել է տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղում՝ մայիսի 11.7%-ից հասնելով 7.7%-ի: Հունվար-հունիս ամիսներին տնտեսական ակտիվության աճը կազմել է 7.9%, որի հիմնական աղբյուրներն են եղել ծառայությունները, արդյունաբերությունը և շինարարությունը՝ համապատասխանաբար 3.8, 3.0 և 1.7 տոկոսային կետ նպաստումներով: Միաժամանակ, աճի կառուցվածքի վերաբերյալ մտահոգությունները շարունակում են արդիական մնալ: Մասնավորապես՝ հունիսին արդյունաբերության ամսական աճը դանդաղել է մինչև 4.0%, իսկ հունվար-մայիսի կառուցվածքային տվյալներով աճը շարունակել է կենտրոնացած մնալ հանքարդյունաբերության և մի քանի առանձին ենթաճյուղերի վրա:

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2026թ. հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. Գյուղատնտեսության ոլորտում հունվար-հունիս ամիսներին արձանագրվել է 11.9% անկում՝ տնտեսական ակտիվության աճին հակազդելով շուրջ 1.1 տոկոսային կետով: Անկման խորացման վրա կարող են ազդեցություն ունենալ նաև ՌԴ-ի կողմից կիրառվող արտահանման սահմանափակումները. պատճառահետևանքային կապը հնարավոր կլինի գնահատել մանրամասն ոլորտային և արտաքին առևտրի տվյալների հրապարակումից հետո: Եթե այս կապը հաստատվի, և սահմանափակումները պահպանվեն, բացասական ազդեցությունը կարող է տարածվել նաև սննդի վերամշակման, տրանսպորտի, առևտրի և հարակից ծառայությունների վրա:

3. Արտաքին առևտրի դինամիկան հունիսին վատթարացել է և շարունակում է մնալ անկայուն: Հունիսին արտահանումը նվազել է 20.5%-ով, և կուտակային անկումը խորացել է մինչև 6.7%, մինչդեռ ներմուծումն աճել է 8.6%-ով, իսկ կուտակային աճը հասել է 4.0%-ի: Այս հակադիր դինամիկան մեծացնում է արտաքին առևտրային հաշվեկշռի վատթարացման ռիսկերը: ՌԴ-ի կողմից սահմանափակումների կիրառման պայմաններում առևտրի դինամիկան կարող է շարունակել վատթարանալ:

4. Հարկաբյուջետային հատվածում եկամուտների բարձր աճը պահպանվել է, սակայն ծախսերի կառուցվածքի և դրանց կատարման վերաբերյալ մտահոգություններն ավելի են ընդգծվել: Հունվար-հունիս ամիսներին բյուջեի եկամուտներն աճել են 14.7%-ով, իսկ ծախսերը՝ 7.0%-ով՝ ձևավորելով 67.3 մլրդ դրամ հավելուրդ: Ընթացիկ ծախսերն աճել են 16.1%-ով, մինչդեռ կապիտալ ծախսերը նվազել են 28.3%-ով, իսկ դրանց թերակատարումը կազմել է 146.4 մլրդ դրամ կամ կիսամյակի պլանի 40.8%-ը: Նախատեսված 316.4 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն արձանագրված հավելուրդի հետևանքով պլանային և փաստացի հաշվեկշիռների շեղումը հասել է 383.7 մլրդ դրամի: Հետևաբար հավելուրդը մեծապես արտացոլում է հատկապես կապիտալ ծրագրերի թերակատարումը և ինքնին վկայում է իրականացվող ծախսերի անարդյունավետ քաղաքականության մասին:

5. Գնաճային և վարկային զարգացումները ևս պահանջում են շարունակական ուշադրություն: Հունիսին 12-ամսյա գնաճն արագացել է մինչև 5.1%՝ գերազանցելով Կենտրոնական բանկի $3\pm 1\%$ թիրախային միջակայքը: Միաժամանակ, ավանդների և վարկերի տարեկան աճերը կազմել են համապատասխանաբար 20.6% և 24.4%: Վարկավորման բարձր աճը մի կողմից աջակցում է տնտեսական ակտիվությանը և ներքին պահանջարկին, մյուս կողմից կարող է պահպանել գնաճային ճնշումները և մեծացնել վարկերի որակի ու տնային տնտեսությունների պարտքային բեռի հետ կապված ռիսկերը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: